

# Ա. Կ Ա. Մ Ա. Յ Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

Ատեղծութիւնը) թունաւոր կիրքը) կեղծիքը) սուտն ու կատաղութիւնը  
 իրար խառնուած՝ սե մաղձի նման կը փրփրի «յառաջդիմական» մամուլի  
 էջերուն մէջ: «Ժողովուրդի Չայն»-ի կիրակնօրեայ ձայնագիրը կը դառնայ  
 անդադար նոյն մաշած եղանակին վրայ: Բայց հիմա, շաբաթը մէկ  
 օր կրկնուող հայհոյանքը քիչ կուգայ հոգիի թլփատիչներուն  
 համար: որոնք սկսած են գրեթէ ամէն օր և ամբողջ թերթը  
 յատկացնել Դաշնակցութեան: Պարզուող տեսարանը անցած է արդէն  
 ծիծաղելիութեան սահմանը և դարձած տխուր: վերջին ծայր տխուր բան  
 մը: կարելի է դիտել իրար գերազանցելու ճիգով հայհոյող բերաններու  
 ատամնաթափ դայրոյթը և շտորհիլ թէ հայ ժողովուրդը ի՞նչպէս խրեցաւ այս  
 մղձաւանջին մէջ և ի՞նչպէս դուրս պիտի գայ զայն անպէ՛տ յարաբերութեան թէ  
 սուգի օրեր են ներգաղթի այնքան սպասուած յարաբերութեան և կառավարչութեան  
 թերթերը կարդացող մը անխուսափելիօրէն այն տպաւորութիւնը կը ստանայ  
 թէ հայութեան մէկ հատուածը — յառաջդիմական հատուածը — ծանր անձ-  
 կութեան մը մէջ կը տապալակի և իր յուսալքումը պարտկելու համար՝ աջ ու  
 ձախ ստուերներ կը փնտռէ հարուածելու: Ո՛ւր է հայրենադարձութեան վե-  
 հութիւնը: ո՛ւր է պատմական վայրկեանին լրջութիւնը: Փոխանակ օր-  
 նութիւններով ճամբայ հանելու Հայաստան մեկնող նաւերը) հոգիի չարա-  
 շահները ամենագուհիկ լուտանքներով կը պղծեն հրաժեշտի խորհրդաւոր  
 ժամը:

Եւ ինչո՞ւ այս սրբապղծութիւնը) ինչո՞ւ այս ջղագար աղմուկը) Պարզ  
 է) Դաշնակցութիւնը քայքայելու նպատակով: Իրենք կ'ըսեն՝ «քայքայուած  
 Դաշնակցութեան» անմեղ զոհերը նաւարկութենէ փրկելու համար: Շատ բա-  
 րի) բայց միթէ՞ կիսաքանդ և խարխուլ ամբողջ մը գրոհը այսքան իրար-  
 անցում) այսքան զօրաշարժ ու այսքան դաւադիր ռազմախաղ կը պահանջէ:  
 Միթէ՞ «նիսած դիակ»-ի մը թաղումին երջանիկ յուղարկաւորները պէտք  
 էին օրն ի բուն հայհոյելու՝ իրենց դձուներուն առջև կեցած:

Ո՛չ) պարզուող պատկերը ուրիշ իրողութիւն կը փաստէ: Այս ամէնը  
 պիտանիչն է հակառակորդներու պարտուողի հոգեբանութեան: Անոնք կը զգան  
 անոնք հետզհետէ աւելի կը համոզուին) որ փոխանակ Դաշնակցութիւնը քայ-  
 քայելու) աւելի կը զօրացնեն զայն՝ իրենց հարուածները իջեցնելով անոր  
 կամքի և հաւատքի պողպատէ սալին վրայ: Անոնք սնանկացած են արդէն  
 հոգիներու գերեզմանութեան շուկային մէջ) որքան ալ խարխուլուած ապ-  
 րանքներ ձարեն տակաւին և ցուցադրեն «յառաջդիմական» խանութներու  
 ցուցափեղկերէն ներս: Այլևս ոչ ոքի համար գաղտնիք մը չէ որ «զգուան-  
 քով հրաժարողներու ստորագրութիւնները ի՞նչ սպառնալիքներով) ի՞նչ  
 դաւերով և ի՞նչ աղաչանքներով կը խլուին: Եթէ անք չարունակ մե-  
 ղի հասնող հերքումներուն) պէտք է ապահովարար «հրաժարողներու թիւին  
 չափ ալ հերքում հրատարակել: Նմուշի համար ներկայացուցինք քանի  
 մը հատ ասկէ առաջ:»

Ո՛ր մէկը յիշել. քարափէն ետ դարձող Հա՞յը) որուն ստորագրութիւնը  
 կեղծեցին) Սամուէլներու և Յակոբներու գարշա՞նքը) իրենց անուններու շա-  
 հագործումին առջև) 5—6 տարեկան գայլուկները) որոնց անմեղ բերնին մէջ  
 «Հրաժարիմք»-ի ամենէն ստորին պարսաւանքներ գետեղեցին) Պէյրութի մէջ  
 ապրող Արծուի՞կը) որ Հալէպի մէջ հրաժարեցուցին) եթանասունամեայ գա-  
 ռամած Արամ Չաւո՞ւչը) որ ոչ մէկ կապ ունի Դաշնակցութեան հետ և որը կը  
 ներկայացնեն իբրև հերոս մը երբ հասարակ բախտախնդիր մըն է եղած. Հ.  
 Մ. Լ. Մ. ի մեռած անդամները) որոնց ոսկորներն իսկ չամշցան շուկայ հա-  
 նելու: Բայց ի՞նչ հարկ փաստերու) կը բաւէ որ ընթերցողը ուշադրութեամբ  
 կարդայ հրաժարագիր մը) որպէսզի տեսնէ թէ «Հրաժարող» տարիներ առաջ  
 քանի մը անգամ անցած է Դաշնակցութեան ակումբին քովէն ու հիմա կը  
 հրաժարի Դաշնակցութենէն) «յեղափոխական երգեր երգող» երգչախումբի մը  
 մաս կազմած է) բայց դարձեալ կը հրաժարի Դաշնակցութենէն) ազգ. հան-  
 դէսներու ներկայ եղած է ու կը հրաժարի Դաշնակցութենէն) Հ. Մ. Լ. Մ. ի  
 մրցումներուն գացած է) բայց կը հրաժարի Դաշնակցութենէն) Ու միշտ զըզ-  
 ուանքով ու միշտ դատաւարտելով:

Այս ողորմելի պատկերին առջև հակառակորդ թերթերը իրենց անզօր  
 կատաղութիւնը կը ծամեն: Մինչ անդին) Հ. Յ. Դաշնակցութեան և Հ. Մ. Լ.  
 Մ. ի շարքերը կը խտանան նորանոր անդամներով և իսկապէս հայրենասէր  
 տղաքը իրենց բոցավառ աչքերով կը տեսնեն թէ ներգաղթի անուան տակ  
 մարդիկ ի՞նչպէս կ'աշխատին փշրել հայութեան ողնասիւնը) անբարոյացնել  
 հայ անհատը) սպաննել անոր մէջ արժանապատուութեան և գաղափարապաշ-  
 տութեան ամէն հետք և ստրկացնել հոգիները:

Մեր թշնամիները ճրագով կը փնտռեն նման առիթ ու չէին գտներ:  
 Թող հրճուին այս քառսին ծախուած հեղինակները) որովհետև եթէ չկրցան  
 հասնիլ իրենց բուն նպատակին) գոնէ յաջողեցան ողբերգութեան վերածել  
 մեր գաղութի ազգային կեանքը) եղբայրը հանելով եղբոր դէմ) հայրը հանե-  
 լով որդւոյն դէմ) պառակտելով ընտանիքները) քայքայելով անտեսութիւններ  
 և սակարկելով հայ ժողովուրդի ամենէն նուիրական զգացումը՝ հայրենասի-  
 րութիւնը: Ո՛չ մէկ կասկած՝ որ մեր դարաւոր թշնամին պատուանշանով պի-  
 տի ուզէր զարդարել այս մարդոց կուրծքը:

Աւելին կայ սակայն: «Յառաջդիմական օրկան»ը իր մոլուցքին թոյնը  
 սկսած է թափել նաև մեր անցեալի բոլոր սրբութիւններուն վրայ: ներկայ

արժէքներու ողջակիզումը անբաւարար կուգայ իր մութ հաշիւներու գործա-  
 դրութեան համար: Պէտք է ջնջել անցեալը) պէտք է թաղել հայոց նորա-  
 գոյն պատմութիւնը) որուն մէջ հաստատուած են հայ ժողովուրդի կենսու-  
 նակութեան արմատները:

«Ժողովր. Չայն» անուր պայքար մը շղթայաղերձած է մեր ազգային  
 երգարանին դէմ) որուն էջերը կէս դարու հերոսամարտերուն սրբազան  
 արիւնով գրուեցան: Դաշնակցութիւնը մոռացութեան գիրկը նետելու միակ մի-  
 ջոցը կը նկատուի լուցնել ազգային ու յեղափոխական այն բոլոր երգերը)  
 որոնք հայ հերոսներու և առաքեալներու յիշատակը կը պանծացնեն և որոնց  
 հնչիւններով հայ մայրը տարիներ շարունակ օրօրեց ու մեծցուց իր զա-  
 ւակները: «Մի՛ երգէ) մի՛ յիշէ) խաչ քառեցէ անցեալին վրայէն) կ'աղաղա-  
 յն ախօր հայասառ բերքերու սիւնակներէն) որպէսզի արժանի նկատուի Հա-  
 յասանին»: Ու եթէ չամչնան՝ պիտի ըսեն որ հայ ժողովուրդը միայն 25  
 տարուան պատմութիւն ունի) վերջին քսանհինգ ամեակը: Իսկ անկէ առաջ՝  
 հայութիւնը կը ննջէր անէութեան մշուշին մէջ...

Այսօր կ'ըսեն՝ պատուեցէ՛ք հայ երգարանը) իսկ վաղը մի՛ զարմանաք  
 եթէ ըսեն՝ այրեցէ՛ք Ռաֆֆին ու Վարուժանը: Այդպէս ըրին անցեալին ու  
 այդպէս կրնան ընել դարձեալ) որքան ատեն որ իրենց նպատակն է հայու-  
 թիւնը վերածել անդէմ ու անկամ զանգուածի) կտրուած անցեալէն) ուրացած  
 իր մեռելները) մոռցած իր պատմութիւնը) ճիշդ գնչուներու նման:

Դաշնակցութիւնը «հաշուեյարդար»-ի ենթարկելու նպատակով միջոցնե-  
 րու մէջ խտր չղնողները սկսած են Դաշնակցութեան կոնակէն ուղղակի հար-  
 ուածել հայ ժողովուրդը: «Ժողովուրդի Չայն» անհաւատալի չարախնդութեամբ  
 մը յայտարարեց թէ «ազգային մարմիններու անունով» պաշտօնական անձ-  
 նաւորութիւններ ըողոք ներկայացուցած են տեղական կառավարութեան)  
 Դաշնակցականներու «ցոյցերը» պատրուակ ծառայեցնելով: Յոյց ըսելով) հարկ  
 չկայ ճշդելու) անոնք կ'ըմբռնեն ազգ. ու յեղափոխական երգեր և հայոց պատ-  
 մութեան նուիրական թուականներու տօնակատարութիւն: Այսպէս ուրեմն) մատ-  
 նութիւնը յակասէ անուանէ) մասնաւոր ցանկերով և Համիտեան օրերը յիշեցնող  
 քսութեամբ սկսած է իր տխուր դերը խաղալ մեր գաղութին մէջ: Ու ասիկա  
 հերոսութիւն կը նկատեն մատնութեան հեղինակները և չեն քաշուիր իրենց  
 թերթի ճակատին վրայ հպարտութեամբ ծանուցանելու: Անոնց ի՞նչ փոյթը  
 թէ հայութիւնն է որ կասկածելի պիտի դառնայ այս ձևով օտարի աչքին) կը  
 բաւէ որ ոտտիկանութիւնը կարենան համոզել թէ «զէնքեր կան պահուած»)  
 կը բաւէ որ քանի մը Դաշնակցականներ բաժանուին նետուին:

Ո՛չ մէկ չափ և ո՛չ մէկ վերապահութիւն կը դնէ հակառակորդը իր  
 անսանձ արշաւին: Ստեղծուած ներքին աւերը ամենայն սառնասրտութեամբ  
 կը տարածէ օտարի աչքին) ջանալով զինակիցներ ճարել նոյնպէս արտաքին  
 ճակատին վրայ: Եւ երբ կը տեսնէ իշխանութեանց ուղղամիտ կեցուածքը)  
 խտելութիւն և մաղձ կը ժայթքեցնէ նաև անոնց վրայ) թէ ինչո՞ւ իրենց  
 մատնանշած անձերը ազատ կը շրջին տակաւին և ինչո՞ւ պատժամիջոցներ  
 ձեռք չեն առնուիր իսկոյն:

«Ժողովր. Չայն» իր ոճրային դիտումներուն մէջ այնքան առաջ կ'եր-  
 թայ) որ իր արար անուանակցին ու լուսեղբոր՝ համայնավար պաշտօ-  
 նաթերթ «Սառութ էլ Շապաղ»-ին գրել կուտայ այնպիսի տողեր) որոնք ամէն  
 հայու հոգիի մէջ միայն ընդլղում կը ծնին: Համայնավարներու արարական  
 օրկանը) որուն հրահանգները պատգամ են իր հայ մանկաւիկներուն համար)  
 հաստատելէ յետոյ թէ «հայերու քաղաքական ժողովը նիստ մը գումարած է եւ  
 երեք հոգիի բաղկացած պատուիրակութիւն մը նշանակած) որոնք սեպակցութիւն  
 մը ունեցած են ներքին գործոց նախարարին հետ իւր լիկի բնակարանին մէջ»)  
 հայեարար եղբայրական յարաբերութեանց պառակտումի սերմեր կը ցանէ և  
 կը պահանջէ որ «զաշնակ չէֆերը» ամենախիստ հետապնդումի և պատիժի  
 ենթարկուին:

Հայ ժողովուրդը) կը տեսնէ թէ քու անունովդ խօսող այս մարդիկը  
 ո՛ւր կրնան իջեցնել քու վարկը այս հիւրընկալ երկրին մէջ և ի՞նչ զէնքերու  
 դիմել՝ իրենց յետին նպատակները իրագործելու համար: կը զգա՞ս թէ քու  
 տանդ ուրախութիւններուն և վէճերուն դուռը ինչպէս կ'անակին վրայ կը  
 բանան «Սառութ էլ Շապաղ»ներուն առջև) որպէսզի անոնք ուղածնուն պէս  
 խաղան քու ճակատագրիդ հետ և շահագործեն քեզ իրենց քաղաքական ծրա-  
 գիրներու կրկէսին վրայ: Մինչև հիմա եղած պայքարը) որ քու ծոցիդ մէջ  
 սահմանափակուած տեսնելու միտքարանքը ունէիր) այժմ սեփականութիւնն  
 է բոլորին) շնորհիւ սրացաւ «Հայաստանասէրներու»: Բարեբախտաբար  
 արար ազնիւ ու վեհանձն ժողովուրդը լաւ կը ճանչնայ հայութիւնը և կը ճան-  
 չնայ նաև «Ժողովուրդի Չայն»-երու հետապնդած նպատակները) ինչ  
 լեզուով ալ հրատարակուին անոնք:

Մենք կը լսենք օրերով՝ քար դրած մեր սրտին վրայ: Ու եթէ երբեմն  
 այսպէս կը հարկադրուինք ակամայ պատասխան մը տալու մեր դէմ եղած  
 հանապազօրեայ յարձակումներուն և դաւադրական աշխատանքի լծուած մար-  
 դոց) պարզապէս ըսելու համար թէ Դաշնակցութիւնը արհամարանք միայն  
 ունի անոնց անձին ու գործին հանդէպ և կը ցաւի հայ ժողովուրդին համար)  
 որուն բարեմտութիւնը և համբերութիւնը կը շահագործեն ամենավտանգաւոր  
 և ստորին ձեռով: